ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 հունվարի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

11
(2677)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԲԱՆԱԿԻ ՔՈՀԵՐԸ՝ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

343

Ուղիղ երեք տարի առաջ՝ այս օրերին՝ 2020-ի հունվարի 10-ին, երբ հայ հասարակության մոտքով անգամ չէր անցնում, որ ընդամենը ամիսներ անց Ադրբեջանի սանձազերծած աղետաբեր պատերազմը հազարավոր զոհերի ու տարածքային կորուստների պատճառ է դառնալու, վարչապետ Նիկոլ Փաշինյանը, իր իսկ կառավարությանը դրվատելու մղումներից ելնելով, ի լուր աշխարհի հայտարարում էր. «2019 թվականի ընթացքում հայոց բանակում (բոլոր պատճառներով) զոհերի պատմական մինիմում է արձանագրվել, այսինքն՝ մեր բանակում երբեք ավելի քիչ զոհ չի եղել, քան 2019 թվականին»:

Սակայն այն, ինչ տեղի ունեցավ ու տեղի է ունենում առ այսօր հայոց բանակում, Փաշինյանի իշխանության իրական դեմքն ու պատկերն է ներկայացնում: «Ժողովուրդ» օրաթերթը, օգտվելով բաց աղբյուրներում հրապարակված տեղեկատվությունից, հավաքագրել է, թե 2018-ի իշխանափոխությունից մինչեւ այս պահը՝ Փաշինյանի կառավարման ժամանակահատվածում, չհաշված պատերազմական գործողությունները, բանակում մահվան քանի դեպք է գրանցվել: Այսպես, ըստ razm.info կայքում հրապարակված տեղեկատվության՝ 2018-ին ու 2019-ին ՀՀ ԶՈՒ-ում զոհերի թիվը համապատասխանաբար 63 եւ 49 է եղել: Նշենք, սակայն, որ Փաշինյանը 2018-ի մայիսից է ստանձնել ՀՀ կառավարումը:

2020-ին, բացի պատերազմի հազարավոր զոհերը, ըստ Հելսինկյան քաղաքացիական անսամբլեայի Վանաձորի գրասենյակի ներկայացրած տվյալների, պատերազմական գործողություններով չպայմանավորված՝ 100 զինծառայողի մահվան դեպք է գրանցվել: 2021-ին խաղաղ պայմաններում 65 զինծառայող է զոհվել. տեղեկությունը իրավապաշտպան Զառա Հովհաննիսյանն է ներկայացրել մի հարցազրույցի ժամանակ: Նախորդ՝ 2022թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին, բացի սեպտեմբերի 13-14-ի ռազմական էսկալացիայի հետեւանքով ունեցած մոտ երեք հարյուր զոհերը, խաղաղ պայմաններում, ըստ կայքերից մեկի ներկայացրած տեղեկատվության, բանակում մահվան 51 դեպք է գրանցվել (3 ամսվա տվյալները բացակայում են): Ամենասարսափելին, ցավոք, 2023-ի հենց սկզբին գրանցված դեպքն էր՝ Գեղարքունիքի մարզի ողբերգությունը, ինչի ժամանակ ժամկետային 15 զինծառայող հրդեհի զոհ դարձավ: Ի դեպ, ըստ ռազմական փորձագետների ու բանակի հարցերով զբաղվող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ մինչեւ այս խաղաղ պայմաններում այդչափ թվով միաժամանակյա մահերի միջադեպ երբեւէ չէր գրանցվել: Այսպես, ի մի բերելով վերոգրյալ թվերը՝ մոտավոր այսպիսի պատկեր է ստացվում. Նիկոլ Փաշինյանի կառավարումից ի վեր՝ առ այս պահը, խաղաղ պայմաններում (չհաշված 2020-ի 44-օրյա ու 2022-ի սեպտեմբերյան երկօրյա պատերազմները) 343 զինծառայող է զոհվել: Եթե այս թիվը համեմատելու լինենք մինչեւ Նիկոլ Փաշինյանի կառավարումը եղած նախորդ 4 տարիների հետ (այդ ժամանակ ՀՀ նախագահը Սերժ Սարգսյանն էր), ապա նորից, ըստ razm.info.am-ի ներկայացրած տվյալների, ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերը չհաշված, Սարգսյանի կառավարման վերջին 4 տարիներին բանակում մահացության 256 դեպք է գրանցվել, Փաշինյանի օրոք՝ 343:



Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցության նախկին պատգամավոր, «Վերածնվող Հայաստան» կուսակցության նախագահ Վահե Հակոբյանն ապահովագրել է իրեն. «Ժողովուրդ» օրաթերթը նախորդ տարի գրել էր, որ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն առաջիկայում խորհրդարան կմտնի 3 պատգամավորների մեղադրանք առաջադրելու եւ կալանավորելու միջնորդությամբ: Խոսքը «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի, նույն խմբակցության պատգամավորներ Վահե Հակոբյանի եւ Արմեն Չարչյանի մասին է: Նաեւ գրել էինք, որ եթե Վահե Հակոբյանը մանդատը վայր դնի, շատ խնդիրներ չի ունենա: Եվ, ահա, գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը երկու միջնորդություն արդեն ներկայացրել է Սեյրան Օհանյանի եւ Արմեն Չարչյանի մասով, իսկ Վահե Հակոբյանը, ինչպես հայտնի է, այլեւս պատգամավոր չէ: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները չեն բացառում, որ Վահե Հակոբյանը գործարքի է գնացել իշխանությունների հետ եւ խոստացել, որ հիմնականում լուռ կմնա, սուր քննադատության չի ենթարկի իշխանությանը, եւ, որպես փոխհատուցում, իրավապահները նրա հանդեպ մի փոքր բարի կլինեն, այսինքն՝ քրեական գործ կհարուցվի, նրա անունը կշոշափվի, նա կհարցաքննվի, սակայն վերջաբանը, ամեն դեպքում, բարի է լինելու: Կարծես թե, մինչ այս պահը Վահե Հակոբյանը Նիկոլ Փաշինյանի իշխանությանը ըստ ամենայնի տված խոստումը պահում է:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության ընտրությունների հարցի շուրջ գործընթացը կասեցված չէ: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այժմ իրավապահ համակարգի կողմից տեխնիկական ստուգման գործընթաց է իրականացվում, որից հետո էլ ՔՊ վարչության անդամներին կանչելու են եւ փորձեն հասկանալ, թե ինչպես է եղել վարչության ընտրակեղծիքը: Ինչպես հայտնի է, նոյեմբերի 4-ին իշխող կուսակցությունը պաշտոնապես հաստատեց, որ իր ղեկավար մարմնի ընտրությունների արդյունքները սխալ են հաշվարկվել, եւ, ստացված դիմումի հիման վրա, իրականացվել է քվեաթերթիկների վերահաշվարկ: Արդյունքում վարչության կազմից դուրս են մնացել իշխող խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը եւ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը, փոխարենը նոր վարչության կազմում են պատգամավոր Արսեն Թորոսյանը եւ ԱԻՆ նախարար Արմեն Փամբուխչյանը: Հայտարարության մեջ այդպես էլ չի հստակեցվում՝ ով է դիմել վերահաշվարկի համար (ըստ լուրերի՝ Արսեն Թորոսյանը), ձայները կեղծվել են, թե անփութություն է եղել, կամ հնարավոր պատասխանատվության հարցը դարձել է քննարկման առարկա, թե ոչ: Այս հարցով զբաղվում են իրավապահները:

Հայաստանի տարածքում գործող խոշոր առեւտրի կենտրոններում ուժեղացված վերահսկողություն է իրականացվում: Առեւտրի բոլոր կենտրոններում, այդ թվում՝ մարզայիններում, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հրդեհատեխնիկական հետազոտություններ եւ ստուգումներ են իրականացվում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ թերությունների հայտնաբերումից հետո տնտեսվարողին այլեւս ժամանակ չի տրվում դրանք վերացնել, այլ անմիջապես գործունեությունը կասեցնելու որոշում է կայացվում: Խոսքը ոչ միայն առեւտրի խոշոր կենտրոնների մասին է, այլեւ փայտամշակման, տպագրական արտադրամասերի, նավթամթերքի պահեստարանների, ընդհանուր նշանակության պահեստների, այնտեղ, որտեղ կարող է լինել մարդկանց մեծաքանակ կուտակում եւ դյուրավառ միջավայր: Նախօրեին պարզ դարձավ, որ կասեցվել է «Մալաթիա» տոնավաճառի գործունեությունը: Տոնավաճառը պետք է փակվի փետրվարի 1-ից: Նշենք, որ այս որոշման հետեւանքով գործազուրկ է դառնում ավելի քան 600 քաղաքացի: Ի դեպ, չի բացառվում, որ առաջիկայում գործունեությունը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացվի նաեւ «Գնունի» շուկայի մասով:

ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԵՋ

ԱՐՑԱԽՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ ՆՅԱՐԴԱՅԻՆ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է ադրբեջանագետ Տաթեւիկ Հայրապետյանը:

-Արդեն 45 օր է, ինչ փակ է Լաչինի միջանցքը, Արցախը շրջափակման մեջ է: Մեզ հետաքրքրում էր, թե այդ հանգամանքները Ադրբեջանում ինչպե՞ս են մեկնաբանում ու գնահատում թե՛ հասարակության, թե՛ պաշտոնյաների շրջանակներում:

-Ադրբեջանական դաշտի ուսումնասիրությունը գալիս է փաստելու, որ այնտեղ եւս նյարդայնանում են իրավիճակի ձգձգմամբ: Օրինակ՝ վերջին երկու օրերի ընթացքում բավականին ուշագրավ հոդվածներ են հրապարակվում, թե Ռուսաստանը պետք է կոնկրետ քայլերի գնա. ի՞նչ են հասկանում՝ կոնկրետ քայլեր ասելով՝ ճնշում գործադրել Արցախի իշխանությունների վրա զիջումների գնալու համար: Իրենք հասկանում են, որ 45 օր փակված պահելով ճանապարհը՝ իրենք որեւէ արդյունքի չեն հասնելու: Ճիշտ է, այդ ամբողջ զրկանքների կրողները մեր՝ Արցախում ապրող հայրենակիցներն են, բայց, ըստ էության, Ադրբեջանը որեւէ խնդիր չի կարողացել լուծել, եւ իրենց համար պատերազմից հետո սա երեւի առաջին նման դեպքն է, որ չեն կարողանում իրենց առջեւ դրված նպատակին հասնել, եւ, բնականաբար, դա վրդովմունք է առաջացնում: Դրան գումարվում են միջազգային կոչերը, շարունակվող զանգերը եւ իրավիճակի հետագա լարումը, քանի որ գնալով իրենք փորձում են օղակը սեմղել՝ գազի մատակարարում, էլեկտրաէներհիա եւ այլն: Այսպես իրենք փորձում են ճնշումը մեծացնել եւ ստիպել գնալ նոր զիջումների: Իրենք դրան չեն կարողանում հասնել: Ընդհանուր առմամբ, սա է դաշտում, եւ մի քանի խնդիր է առկա եւ դրված իրենց առջեւ, որոնց մասին բարձրաձայնում են. հանքի խնդիրն արդեն փոքր հարց է դարձել եւ պատրվակ է: Իրենց նպատակը Ռուբեն Վարդանյանի հեռացումն ու անցակետեր տեղադրելն է: Անցակետի տեղադրման մասով. դա դառնալու է Արցախի հայաթափման առաջին քայլը, ու մարդիկ դուրս են գալու: Վառ օրինակ եւ ապացույց է այն դրվագը, որ եղավ երեխաներ տեղափոխող ավտոբուսի ժամանակ:

-Ադրբեջանի ԱԳՆ-ն երեկ խիստ վրդովմունք էր հայտնել՝ ԵՄ առաքելության՝ ՀՀ սահմանային գոտիներ ուղարկելու հետ կապված: Ի՞նչն է իրականում Ադրբեջանի վրդովմունքի պատճառը:

-ԵՄ առաքելության կողմից մշտադիտարկման առաքելության ժամկետի երկարացումն իրենք իսկապես շատ ցավոտ են ընդունում: Բաքվում դա դիտում են որպես խոչընդոտ՝ հերթական ագրեսիաներին գնալու համար, եւ իրենց ագրեսիան հենց դրանով է բացատրվում: Քարոզչական լուրջ աշխատանք են տանում, եւ դա նաեւ դիվանագիտական աշխատանք է. հենց երեկ Ալիեւի օգնական Հիքմեթ Հաջիեւը հանդիպել էր Իրանի դեսպանի հետ, եւ ինտենսիվ աշխատանք են տանում Իրանի եւ ՌԴ կողմից կոշտ արձագանք ստանալու համար: Դրա համար մեր կողմը պետք է պրոակտիվ լինի, պատշաճ կոմունիկացիաներով տեղեկացնի իր գործընկերներին եւ դրանով խուսափի այն խնդիրներից, որոնք Բաքվում բնականաբար ստեղծվելու են:

-Ձեր հարցազրույցներում միշտ նշում եք, որ Լաչինի միջանցքում այսօր ստեղծված իրավիճակը ուղղակիորեն կապված է ավելի քան 30 տարի առաջ Բաքվում եւ Սումգայիթում տեղի ունեցածի հետ: Հիմա, փաստորեն, նպատակները նույնն են, ձեռագիրը՝ այլ, բայց, ի՞նչ եք կարծում, Բաքուն շատ ավելի կոշտ ու ողբերգական քայլերի կդիմի՞:

-Այո, այսօրվա քաղաքականությունն իրենց 30 տարի առաջվա քաղաքականության շարունակությունն է՝ նույն մեթոդներով: Իրոք, պատահական չէ, որ Բաքուն հենց այս տարբերակն է ընտրել կրկին, որովհետեւ իրենց ներքին դիսկուրսներին հետեւելով՝ տեսնում ենք, որ իրենք փորձում են արդարացնել, թե ինչու են այդ ճանապարհն ընտրել կամ ավելի բռնի եւ ռազմական ճանապարհ: Նրանք բացատրում են, որ աշխարհը թույլ չի տալիս գնալ ուղիղ էթնիկ զտումների, եւ իրենք այս ճանապարհով կստիպեն հայերին դուրս գալ եւ այդպես խնդիրը կփակեն: Եւ թույլ չեն տա երբեք՝ հայերն այդ խնդիրը բարձրաձայնեն: Նրանք հիմա այս պահը համարում են պատմական պահ եւ սպասում են ու հույս ունեն, որ հարցը կլուծվի, այնտեղ հայ չի մնա: Իրենց պատկերացրած Արցախում հայ չպետք է մնա, եւ իրենք ամեն կերպով դա ապացուցում են: Ու ես կարծում եմ, որ մեր պաշտոնյաները պետք է օգտվեն այդ հայտարարություններից: Ուրախ եմ տեսնել, որ Արարատ Միրզոյանի վերջին ելույթում շեշտվել է այդ հանգամանքը, եւ դա պետք է հետեւողական գիծ լինի:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՉԻ ԳՈՐԾՈՒՄ

2023 թ. հունվարի 1-ից Թուրքիայի ու Հայաստանի միջեւ հնարավոր է իրականացնել ուղիղ ավիաբեռնափոխադրումներ. սա Հայաստանի եւ Թուրքիայի հատուկ ներկայացուցիչների միջեւ ձեռք բերված պայմանավորվածություններից մեկն էր: Հունվարի 6-ին ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ Վահան Հունանյանն էլ հայտնել էր. «Թուրքական կողմն այսօր մեզ տեղեկացրել է, որ ուղիղ օդային բեռնափոխադրումների արգելքը վերացվել է: Ցանկանում ենք հիշեցնել, որ Հայաստան-Թուրքիա ուղիղ օդային բեռնափոխադրումների իրականացումը 2022 թ. հուլիսի 1-ին հատուկ ներկայացուցիչների հանդիպմանը ձեռք բերված պայմանավորվածություններից մեկն էր»: «Ժողովուրդ» օրաթերթը դիմել էր ՀՀ էկոնոմիկայի նախարարություն եւ հետաքրքրվել, թե այս արգելքի վերացումից հետո արդյոք դիմումներ եղել են օդային բեռնափոխադրումներ իրականացնելու համար: Ի պատասխան՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից հայտնում են. «2023 թվականի հունվարի 1-ից՝ թուրքական կողմից Թուրքիա-Հայաստան եւ հակառակ ուղղությամբ օդային բեռնափոխադրումների արգելքի վերացումից հետո, Հայաստան-Թուրքիա եւ հակառակ ուղղությամբ դեռեւս օդային ճանապարհով բեռնափոխադրումներ չեն իրականացվում: Դեռեւս մաքսային եւ այլ ընթացակարգերի համաձայնեցում պետք է տեղի ունենա, որպեսզի հնարավոր լինի իրականացնել այդ թռիչքները»: Այսինքն՝ որոշումը կա, քաղաքական հայտարարությունը կա, բայց խնդիրը փաստացի չի լուծվել. փոխադրում անել հնարավոր չէ:

ՔՊ–ՈՒՄ ԹԵԺ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՆ

Սեյրան Օհանյանին անձեռնմխելիությունից զրկելու դատախազության երեք միջնորդություններից մեկը խորհրդարանում կքննարկվի փակ նիստով, քանի որ այն գաղտնի ռեժիմով է խորհրդարան եկել: Մյուս երկու միջնորդություններն արդեն կքննարկվեն բաց նիստով, որի ժամանակ էլ, ԱԺ պատգամավորների մեծամասնության որոշմամբ, Օհանյանը կզրկվի պատգամավորական անձեռնմխելիությունից: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ՔՊ-ն թեեւ վերջնական որոշում չունի այս մասով, բայց, ամեն դեպքում, մեծամասնությունը տրամադրված է համաձայնություն տալ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում սկսելուն: Պատճառն էլ այն է, որ չեն ցանկանում հակադրվել դատախազության որոշմանը: Տեղեկացանք նաեւ, որ թեեւ այս օրերին խմբակցության ներսում թեժ քննարկումներն են գնում, բայց ՔՊ-ն ամբողջ կազմով կհավաքվի միայն նստաշրջանի նախորդ օրը՝ փետրվարի 6-ին, որի ժամանակ էլ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը մյուս պատգամավորներին կտեղեկացնի ընդդիմադիրների մասով խմբակցության որոշման մասին: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ խմբակցությունում կան պատգամավորներ, որոնք դեմ են ընդդիմադիր պատգամավորների նկատմամբ իրականացվող այս գործընթացին, գտնում են, որ անվտանգային նման լարված իրավիճակում քաղաքական «շոուների» ժամանակը չէ: Այս օրերին պարբերաբար հանդիպումներ են ունենում «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Սեյրան Օհանյանը, Արծվիկ Մինասյանը եւ Իշխան Սաղաթելյանը, որոնք էլ որոշում են՝ ինչ հակահարված են տալու իշխող ֆրակցիային:

ԶՐՈՒՅՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ՇԵՂՄԱՆ ՕՊԵՐԱՑԻԱՆ

Հունվարի 19-ին՝ Ազատ գյուղում տեղի ունեցած զորամասի ողբերգական հրդեհից անմիջապես հետո, երբ հասարակությունը ենթարկում էր իշխանությունների պատասխանատվության հարցը այդ ողբերգական միջադեպի հարցում, ՀՀ գլխավոր դատախազ Անա Վարդապետյանը որոշեց ընդդիմադիր պատգամավորների նկատմամբ քրեական հետապնդում սկսելուն համաձայնություն տալու միջնորդություն ներկայացնել ԱԺ, թեեւ «Ժողովուրդ» օրաթերթը դրա մասին վաղուց էր գրել:

ArmLur.am-ը այս առիթով զրուցել է քաղտեխնոլոգ Կարեն Քոչարյանի հետ:

-Պարոն Քոչարյան, ինչո՞ւ հենց հիմա որոշեցին ընդդիմադիր պատգամավորներին անձեռնմխելիությունից զրկելու միջնորդություն ներկայացնել:

-Հերթական շեղման օպերացիան է, փորձում են հասարակության ուշադրությունը շեղել: Կարծում եմ, որ նույն նպատակով իշխանական ճամբարի մի թեւ փորձում է տաք պահել նաեւ Պապիկյանի հրաժարականի թեման, այսպես ասած՝ «դամոկլյան թուր» են կախում:

-Պարոն Քոչարյան, բայց տպավորություն է, որ հասարակության ուշադրությունը շեղելու այս գործելաոճն այլեւս չի ազդում, արդեն այս միջոցն էլ է սպառվել:

-Հասարակությունը սովոր է: Չեմ կարող ասել՝ այս անգամ կգործի, թե չէ, բայց որ «ներկա-նախկին» մանիպուլացիան այլեւս չի աշխատում, դա փաստ է. եթե բանականությունից զուրկ մարդկանց հանեք, մնացածի վրա արդեն էլ չի ազդում:

-Միջադեպից ընդամենը ժամեր անց Նիկոլ Փաշինյանը կանխավարկած առաջ քաշեց, թե զինվորները խախտել են անվտանգության կանոնները: Տպավորություն էր, որ նա շտապում է դեպքի վերաբերյալ մանրամասներ առաջինը հայտնել՝ չսպասելով քննության ավարտին:

-Նիկոլ Փաշինյանի՝ կանխավարկած տալը նորություն չէ. հիշեք «Սուրմալու»-ն կամ պատերազմի առաջին օրը, որ ասում էին՝ ինչ էլ պատահի, մենք մեզ պարտված չենք համարի. սա էլ է իրենց գործելաոճը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի որոշմամբ՝ Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողները խրախուսվել են միանվագ դրամական պարգեւատրմամբ: ArmLur.am-ը տեղեկացավ, որ խոսքը, մասնավորապես, ԱԺ մշտական հանձնաժողովների փորձագետների, կամ, օրինակ, ԱԺ աշխատակազմի աշխատակիցների մասին է: Տեղեկացանք նաեւ, որ անձնական տվյալների պաշտպանվածության նորմերից ելնելով՝ ԱԺ պարգեւատրված աշխատակիցների անունները կարող են եւ չհրապարակվել: Պարգեւատրվածների ցանկ-հավելվածը, ի դեպ, ԱԺ նախագահի կողմից ստորագրված որոշումից հենց այդ հիմքով էլ բացակայում է: ArmLur.am-ին հայտնի դարձավ մեկ այլ հանգամանք եւս. պետական ծառայողները տարեկան երկու անգամ միանվագ պարգեւատրում են ստանում:

ԳՌՆՓԱԿ ՆԻՍՏ

ArmLur.am-ը հայտնել էր, որ «Հայաստան» խմբակցությունը հունվարի 8-ին արտագնա նիստ էր անցկացրել, որին մասնակցել էր նաեւ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

ArmLur.am-ին խմբակցության պատգամավոր Ագնեսա Խամոյանը հայտնել էր, որ արտագնա նիստի ժամանակ քննարկել են Լաչինում ստեղծված իրավիճակի հետ կապված հարցերը, ներքաղաքական իրավիճակը, ամփոփվել է անցած տարին, խոսել են ֆրակցիայի մարտավարական քայլերի մասին:

Մամուլում երեկ լուրեր շրջանառվեցին, որ այդ հանդիպման ժամանակ «Ռոբերտ Քոչարյանը հաղորդել է, որ որոշել է պասիվանալ, քանի որ աջուձախից իրեն մեղադրում են, թե դաշտը զբաղեցրել է, չի թողնում, որ նոր ընդդիմություն ձեւավորվի: Թիմին ասվել է՝ իրենց անելիքները կազմակերպելու հարցում ազատ են»:

ArmLur.am-ը արդեն կապ է հաստատել խմբակցության մի քանի պատգամավորների հետ, որոնք հերքել են այս տեղեկությունը:

ArmLur.am-ը շարունակում է կապ հաստատել նաեւ խմբակցության մյուս պատգամավորների հետ. «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը վստահեցրեց՝ այդպիսի բան չկա. «Ընդհակառակը, մենք խոսել ենք բոլոր ուղղություններով մեր գործունեության ակտիվացման մասին՝ եւ՛ ԱԺ-ում, եւ՛ արտախորհրդարանական գործունեության մասով: Նման բան չկա, վերջին հանդիպման ժամանակ նման խոսակցություն չի եղել»,- ասաց Օհանյանը:

Խմբակցության մյուս պատգամավոր Ասպրամ Կրպեյանն ասաց, որ մեկնաբանություն չունի այս մասին:

Գեղամ Մանուկյանը եւ Արթուր Խաչատրյանն էլ նշեցին, որ տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը, ուստի չեն ցանկանում մեկնաբանել: Թադեւոս Ավետիսյանը, մեր հարցին ի պատասխան, ասաց. «Չկա նման բան, ընդհակառակը՝ ակտիվ քննարկել ենք մեր հետագա անելիքները, բոլոր պատգամավորներն իրենց տեսակետն են հայտնել, իսկ պասիվանալու մասին խոսք չի եղել»:

ԳՐՈՒԹՅՈՒՆ Է ՈՒՂԱՐԿՎԵԼ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՀԱՋԱՆԳԵՐ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Քաղաքացիներն ահազանգում են իրենց գույքային իրավունքների խախտումների մասին:

Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի բնակիչներից մեկը մասնավորապես նշել է, որ հանրության գերակա շահ ճանաչված տարածքում սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասի (Արագածոտնի մարզ, Ապարան համայնք, Եղիպատրուշ գյուղ, 0,3799 հա) համար առաջարկվող փոխհատուցման գումարն օբյեկտիվորեն չի համապատասխանում իր անշարժ գույքի շուկայական արժեքին:

Մինչդեռ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով հողամասի սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում եւ կարգով՝ միայն նախնական եւ համարժեք փոխհատուցմամբ: Մասնավորապես, «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը:

Տվյալ դեպքում փորձագիտական կազմակերպությունը տվել է գնահատման եզրակացություն եւ որոշել, որ հողամասի փոխհատուցումը կազմել է 544 525 ՀՀ դրամ, որը հաշվարկվել է 1 քմ հողամասի համար 133 ՀՀ դրամ արժեքով: Որոշումն առաջացրել է քաղաքացու դժգոհությունը:

Այս կապակցությամբ գրություն եմ ուղարկել ՀՀ էկոնոմիկայի նախարարին, որը վստահեցրել է, որ հանրության գերակա շահ ճանաչված տարածքների օտարման գործընթացն իրականացվում է՝ ՀՀ օրենսդրության դրույթներին համապատասխան:

Հարկ է նկատել, որ վերոնշյալի համատեքստում առնվազն մտորումների տեղիք է տալիս ՀՀ էկոնոմիկայի նախարարի վերոնշյալ ձեւակերպումը այն պարագայում, որ առկա են դատական գործեր, որով վիճարկվում են վերոնշյալ հանգամանքները: Ըստ այդմ՝ օտարման գործընթացն իրականացվում է ՀՀ օրենսդրության դրույթներին համապատասխան, թե ոչ՝ կորոշի դատարանը:

Ինչեւէ, Եղիպատրուշ գյուղի բնակիչը եւ, իր պնդմամբ, այլ համագյուղացիներ եւս մնում են դժգոհ որոշումից, քանի որ այդպիսով իրենց խնդիրը լուծում չի ստանում:

Նշեմ, որ առկա է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի վերաբերյալ համանման պրակտիկա, երբ դժգոհ քաղաքացիները, որոնք ընդդեմ Հայաստանի բողոքներ են ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան, ըստ էության, վերջինիս կողմից բողոքներից շատերը ընդունելի են համարվել, եւ դատարանի կողմից առնվազն փաստվել է բողոքաբերների սեփականության իրավունքի խախտման հանգամանքը:

Պետական պաշտոնյաները պարտավոր են հարգել մարդու սեփականության իրավունքը եւ գործել դրա շրջանակներում»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Լաչինի միջանցքի փակ լինելու հետեւանքով Լեռնային Ղարաբաղում մնացած 11 քաղաքացի ընտանիքի միավորման նպատակով Կարմիր խաչի միջնորդությամբ տեղափոխվել է Հայաստան: 10 քաղաքացի էլ Կարմիր խաչի միջնոդրությամբ Լաչինի միջանցքով տեղափոխվել է Հայաստանից: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց ԿԽՄԿ հայաստանյան գրասենյակի հաղորդակցման եւ կանխարգելման ծրագրերի ղեկավար Զառա Ամատունին:

ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԸ ԿԳՈՐԾՈՒՂՎԵՆ

ՔՊ-ական պատգամավոր Մարիամ Պողոսյանը պետբյուջեի հաշվին կգործուղվի Արաբական Միացյալ Էմիրություններ:

Մարիամ Պողոսյանը Շարժա քաղաքում կմասնակցի Ներդրումային ֆորումին: ՔՊ-ական պատգամավորը գործուղման մեջ կլինի փետրվարի 7-10-ը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը՝ ճանապարհածախսը, գիշերավարձն ու օրապահիկը, ՀՀ պետբյուջեի հաշվին են կատարվելու:

ԴՊՐՈՑԸ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ Է ՓՆՏՐՈՒՄ

Նոյեմբերյան խոշոր համայնքի սահմանամերձ Դովեղ գյուղի միջնակարգ դպրոցը «Ֆեյսբուք»-ում հայտարարություն է տարածել, որով հայտնում է, որ Դովեղի դպրոցին հարկավոր են մաթեմատիկա ու թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն առարկաների ուսուցիչներ: Դովեղը Նոյեմբերյան քաղաքից հեռու է ընդամենը 3 կիլոմետր, Նոյեմբերյանի բնակիչը կարող էր այնտեղ աշխատել: Տավուշի մարզպետարանից «Ժողովուրդ» օրաթերթին հայտել են, որ մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական 76 դպրոցներում առկա է ուսուցիչների 27 թափուր հաստիք՝ մաթեմատիկա, քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա, անգլերեն, ռուսերեն, պատմություն, արվեստ, բնագիտություն, ինֆորմատիկա, շախմատ, տեխնոլոգիա, երաժշտություն առարկաների գծով:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին երեկ՝ հունվարի 24-ին, հայտարարել է, որ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ քննարկել է Ուկրաինա-Ռուսաստան ռազմական հակամարտությունը դիվանագիտական ճանապարհով ավարտելու հետ կապված հարցեր: Այս մասին գրում են ռուսական լրատվամիջոցները՝ հղում անելով նախօրեին տեղի ունեցած Մակրոն-Զելենսկի հեռախոսազրույցին:

«Հեռախոսազրույցի ժամանակ Ուկրաինայի նախագահը Ֆրանսիայի իր գործընկերոջը շնորհակալություն է հայտնել ռազմական տեխնիկայի, մասնավորապես՝ տանկերի, ինչպես նաեւ հակօդային պաշտպանության միջոցների տրամադրման համար, որ ուկրաինական բանակը շատ ավելի անխոցելի կդարձնեն»,- ասված է Ուկրինայի նախագահ Զելենսկիի թելեգրամյան ալիքում:

ԽՈՇՈՐ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՊԵԿ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆՔ ԿԱՇԱՌՔ ԵՆ ՍՏԱՑԵԼ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման ու քննչական դեղարտամենտների կողմից փոխգործակցության ձեւաչափով իրականացված մեծածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ ՊԵԿ պաշտոնատար անձինք, իրենց իշխանական եւ ծառայողական լիազորություններն օգտագործելով, կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի նկատմամբ թողտվություն դրսեւորելու եւ նրա օգտին ապօրինի գործողություն կատարելու համար որոշ դեպքերում՝ անձամբ, որոշ դեպքերում՝ ՀՀ ՊԵԿ այլ պաշտոնատար անձանց հետ խմբի կազմում, որոշ դեպքերում տարբեր անձանց օժանդակությամբ Հայաստանի Հանրապետություն տարատեսակ ապրանքներ ներկրող տնտեսվարողներից կամ նրանց անունից հանդես եկած մասնային միջնորդական կամ բեռների փոխադրմամբ զբաղվող ընկերությունների ներկայացուցիչներից ներկրված տարատեսակ ապրանքների իրական ծավալները, քաշը, ծագման երկիրը ներկայացված հայտարարագրերում թաքցնելու եւ մաքսազերծման համար այլ անհրաժեշտ տվյալները խեղաթյուրելու պայմաններում հիշյալ խախտումները չարձանագրելու, համապատասխան միջոցներ չձեռնարկելու եւ մասնային բեռների անխոչընդոտ բաց թողնելը կազմակերպելու համար 2022 թվականի նոյեմբերից մինչեւ 2023 թվականի հունվարի 11-ն ընկած ժամանակահատվածում հիշյալ անձանցից պահանջել ու ՀՀ դրամով կամ արտարժույթով ստացել են տարբեր չափերով, այդ թվում՝ խոշոր չափերով կաշառք-գումարներ:

Բացի դրանից, պարզվել է, որ ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության բարձրաստիճան պաշտոնատար անձը, իր իշխանական եւ ծառայողական լիազորություններն օգտագործելով, ՊԵԿ պաշտոնատար անձի նկատմամբ թողտվություն դրսեւորելու, այն է՝ ներկրմամբ զբաղվող տարբեր տնտեսվարողների կողմից վերը նկարագրված չարաշահումները թույլ տալու պայմաններում համապատասխան միջոցներ չձեռնարկելու, փոխարենը ապրանքների անխոչընդոտ բացթողումն իրականացնելու դիմաց կաշառք-գումարներ ստանալու հանցանքներում պաշտոնատար անձին չմերկացնելու, այդ ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելու համար 2022 թվականի նոյեմբերին վերջինից պահանջել եւ ստացել է կաշառք-գումար:

Դեպքերի առթիվ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում նախաձեռնված քրեական վարույթով կատարվել են շուրջ երեք տասնյակից ավելի խուզարկություններ, որոնց ընթացքում հայտնաբերվել եւ վերցվել են հանցանքների կատարմանը վերը նշված անձանց առնչությունը վկայող տվյալներ, ինչպես նաեւ ապօրինի պահվող հրազեններ, որոնց դեպքերի առթիվ նախաձեռնվել են քրեական վարույթներ, որոնք միացվել են սույն քրեական վարույթին:

Նախաքննության ընթացքում, հանցանքների կատարումը վկայող փաստերի հիման վրա, ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում է հարուցվել 15 անձի նկատմամբ, որոնցից 12-ի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է, իրականացվում են քննչական անհրաժեշտ գործողություններ եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ դեպքի բոլոր հանգամանքները, հանցավոր սխեմայում ներգրավված պաշտոնատար եւ այլ անձանց ամբողջական շրջանակը պարզելու եւ նրանց նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցներ կիրառելու համար:

ԼՈՒՐԵՐ

Ո՞ՐՆ Է ՊԱՏՃԱՌԸ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ռազմական ոստիկանությունը խիստ հսկողություն է սահմանել հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում հրդեհի հետեւանքով հիվանդանոցում գտնվող սպայի նկատմամբ: Իրավապահ համակարգն այս որոշման է եկել այն բանից հետո, երբ հայտնի է դարձել, որ, ըստ նախնական վարկածի, սպան բենզինով փորձել է թեժացնել կրակը, որից հետո հրդեհ է բռնկվել, եւ 15 զինծառայող այրվել են: Իրավապահ համակարգը չի բացառել, որ միգուցե փորձեն հաշվեհարդար տեսնել սպայի հետ, ուստի, անվտանգությունից ելնելով, խիստ հսկողություն է սահմանվել սպայի հիվանդասենյակի մոտ:

Հիշեցնենք, որ Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում գտնվող կացարանում տեղի ունեցած հրդեհի հետեւանքով կա 15 զոհ, 7 վիրավոր: Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Նշենք, որ ողբերգական դեպքից հետո ՊՆ-ում մի շարք պաշտոնատար անձիք ազատվեցին պաշտոնից. ըստ էության, քաղաքական իշխանությունն իր անգործության մեղքը բարդեց հրամանատարների վրա՝ ազատելով նրանց պաշտոնից:

ՄԵՂԱԴՐԱՆՔ ԿԱՌԱՔԱԴՐՎԻ

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում գտնվող կացարանում տեղի ունեցած հրդեհի հետեւանքով նախաձեռնված քրեական վարույթով նախաքննական մարմինը, ամենայն հավանականությամբ, մեղադրանք կառաջադրի զորամասի պաշտոնատար անձանցից մեկին, որը եղել է զորամասի հրդեհային անվտանգության կանոնները պահպանելու մասով պատասխանատուն, իսկ թե կոնկրետ ով է նա, այս պահին նախաքննությանը չվնասելու համար վերջինիս տվյալները չենք ներկայացնում:

Հիշեցնենք, որ 2023թ. հունվարի 19-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված N զորամասի ինժեներասակրավորային վաշտի անձնակազմի համար նախատեսված կացարանում տեղի ունեցած հրդեհի, դրա հետեւանքով նույն վաշտի 15 զինծառայողների մահվան, մի քանի զինծառայողների՝ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստանալու դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ:

Դեպքից հետո պաշտոնից ազատվեցին 2-րդ բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Վահրամ Գրիգորյանը, 2-րդ բանակային կորպուսի շտաբի պետ-կորպուսի հրամանատարի տեղակալ, գնդապետ Միհրան Մախսուդյանը, 2-րդ բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ թիկունքի եւ ԿԾԾ գծով, թիկունքի պետ, գնդապետ Շիրազ Խաչատրյանը եւ այլ պաշտոնատար անձինք:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԼՈՒՐՋ ԲԱՑԹՈՂՈՒՄ

Հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում գտնվող զինվորների կացարանում տեղի ունեցած հրդեհից հետո երեք զինվոր տեղափոխվել էր Երեւան՝ Այրվածքաբանության կենտրոն: ArmLur.am-ը, հենց առաջինը հրապարակած լինելով, թե ինչ է պատմել վիրավոր զինվորներից մեկն իրավապահներին, բնականաբար ցանկություն եւ նպատակ է ունեցել նաեւ նրանց հետ անձամբ հանդիպել եւ զրուցել:

Հենց այդ նպատակով ArmLur.am-ը կապ էր հաստատվել Այրվածքաբանության կենտրոնի հետ, սակայն մեզ փոխանցել էին, թե նկարահանումներն արգելված են: Սակայն երեկ լրատվամիջոցներն ականատես եղան իրավիճակի, երբ լրատվամիջոցներից մեկին հաջողվել էր կենտրոնում նկարահանում անել վիրավոր զինվորներից մեկի հետ:

Այսքանից հետո բնականաբար հարց է առաջանում, թե ինչպես է մի լրատվամիջոցի հաջողվել գնալ եւ նկարել, իսկ մյուսներին՝ ոչ: Սա հենց համակարգի բացթողումն է. եթե նկարահանումն արգելված է եղել եւ իրականացվել է գաղտնի, ինչու տարածքում հետեւողներ չեն եղել, ինչու չեն հսկել հիվանդասենյակներ մուտք ու ելքը: Նույն կերպ կարող էր լրատվամիջոցի փոխարեն այլ անձ մտնել զինվորի սենյակ եւ բոլորովին վատ նպատակներով: Իսկ նրանց պետք է հսկող լիներ եւ սա հենց համակարգի բացթողումներից է:

Այսինքն, Այրվածքաբանության կենտրոնում անգամ չեն կարողանում ապահովել վիրավոր զինվորների անվտանգությունը եւ եթե արգելում են նկարահանում, կարողանան հսկել բոլորին:

ԱԶԱՏՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրով Առաքել Մարտիկյանն ազատվել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնից.

«Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաեւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի.

Առաքել ՄԱՐՏԻԿՅԱՆԻՆ ազատել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնից»:

Մեկ այլ հրամանագրով Սամվել Մովսիսյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզության գլխավոր վարչության պետ-Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ.

ArmLur.am-ին հայտնի դարձավ, թե որն է է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ Առաքել Մարտիկյանի պաշտոնից ազատման պատճառը: ArmLur.am-ի տեղեկություններով լրացել է Մարտիկյանի պայմանագրի ժամկետը եւ այս ազատումը որեւէ առնչություն չունի զինվորների ողբերգական մահվան դեպքի հետ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 24-ից 25-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 61 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՔՈՂԵՋԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Դիլիջան խոշոր համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը հանդիսանում է նաեւ Դիլիջանի պետական քոլեջի կառավարման խորհրդի նախագահը: 1984թ. ծնված Դ. Սարգսյանը ավարտել է Դիլիջանի պետական քոլեջը, այժմ հեռակա սովորում է Հայաստանի Եվրոպական համալսարանում: Անձնական գործում իր սեռը «արու» գրած, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, 2021թ. փետրվարի 26-ին նշանակվել է Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար, նույն թվականի հոկտեմբերի 17-ին կայացած Դիլիջան համայնքի ավագանու համամասնական ընտրությունների արդյունքներով ձեւավորված ավագանու կողմից ընտրվել է համայնքի ղեկավար: Դիլիջան համայնքի ղեկավարի խորհրդական Նոնա Գրիգորյանը կես դրույքով աշխատում է որպես Դիլիջանի պետական քոլեջի տնօրենի տեղակալ: Դիլիջանի պետական քոլեջի տնօրեն Վահագն Հովհաննիսյանը հայտնեց, որ Դ. Սարգսյանը քոլեջի կառավարման խորհրդի նախագահ է դարձել, իսկ Ն. Գրիգորյանը քոլեջի փոխտնօրեն նշանակվել մինչեւ իր՝ քոլեջի տնօրեն նշանակվելը՝ 2022թ. հոկտեմբերի 22-ը:

ԵՂԵԼ Է ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ

Հունվարի լույս 20-ի գիշերը Բերդ խոշորացված համայնքի սահմանամերձ Մովսես գյուղում անհայտ անձը կամ անձինք ծակել են գյուղում կայանած 7 ավտոմեքենաների անվադողերը, այրել ավտոմեքենայի քարշակում դարսված 30 հակ անասնակեր խոտը, գիշերը գյուղում նկատել են անծանոթ 3-4 հոգու եւ այլն: Մովսեսը Ադրբեջանի հետ 18 կիլոմետր սահման ունի, նշված դեպքերն էլ կատարվել են հայ-ադրբեջանական սահմանից ընդամենը 500 մետր հեռավորությամբ գտնվող գյուղի Հյոնուտ թաղամասում: ՀՀ քննչական կոմիտեում Մովսեսում կատարված դեպքերի վերաբերյալ 2 քրեական գործ է քննվում, մեկը՝ Մովսեսում ավտոմեքենայից նվագարկիչի գողության, մյուսը՝ գյուղում ավտոմեքենաների անվադողերի ծակման, անասնակեր խոտի հրկիզման փաստերով: Բերդ խոշորացված համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը կարծիք հայտնեց, որ սահմանամերձ Մովսես գյուղում կատարվածը ոչ թե ադրդեջանական դիվերսիա է, այլ խուլիգանություն: Նա ասաց, որ սահմանապահ զիվորականները հավաստիացում են, որ իրենք սահմանը ամուր են պահում, եւ ադրբեջանական դիվերսանտների թափանցում չի եղել: Համայնքի ղեկավարին հարցրի Մովսեսում գիշերը 3-4 անծանոթների հայտնվելու մասին: Նա ասաց, որ մովսեսցիները տեսախցիկի կադրերը նայել են, նշված անձինք Մովսեսի բնակիչներ են եղել, որոնց համագյուղացիները սկզբից չեն ճանաչել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲԱՑԱՌԻԿ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՖՐԱՆՍԻԱՀԱՅԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ՄԱԿՐՈՆԻՆ

Հունվարի 23-ին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը Ելիսեյան պալատում հյուրընկալել է ֆրանսահայ կազմակերպությունների համակարգող խորհրդի (CCAF) համանախագահներ Արա Թորանյանին եւ Մուրադ Փափազյանին՝ քննարկելու դեկտեմբերի 12-ից Ադրբեջանի շրջափակման մեջ գտնվող Լեռնային Ղարաբաղում տիրող դրամատիկ իրավիճակը եւ սպառնալիքները, որոնք ազդում են երկրի վրա, ինչպես նաեւ Հայաստանի տարածքային ամբողջականության:

Այս եւ այլ հարցերի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ֆրանսահայ կազմակերպությունների համակարգող խորհրդի (CCAF) համանախագահ Արա Թորանյանի հետ:

-Պարոն Թորանյան, կարո՞ղ եք մեզ մանրամասներ փոխանցել Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ Ձեր եւ Մուրադ Փափազյանի հանդիպման մասին:

-Ինձ համար դժվար է շատ մանրամասներ ներկայացնել: Մենք կիսվել ենք նախագահի հետ մեր մտահոգություններով: Հանդիպման ժամանակ, բնականաբար, խոսել ենք Ղարաբաղի շրջափակման շուրջ ստեղծված իրավիճակի եւ Հայաստանի դեմ ուղղված սպառնալիքների մասին: Էմանուել Մակրոնը բավական ուշադիր էր լսում մեզ հանդիպման ժամանակ: Այն տեւել է ավելի քան մեկ ժամ: Նախագահն իր վրա մի քանի կետեր է վերցրել, որոնք չեմ կարող այստեղ բացահայտել: Ես կարող եմ միայն ասել, որ նա շատ անհանգստացած է իրավիճակով: Նա հետեւում է խնդրին եւ պատրաստվում է իր նախաձեռնություններով հանդես գալ՝ ի աջակցություն Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդին: Հուսով եմ՝ շուտով մենք տեղում կտեսնենք նրա ստանձնած պարտավորությունների արդյունքները:

-Ինչպե՞ս կարող է Ֆրանսիան օգնել Արցախը շրջափակումից դուրս բերելու հարցում: Ի՞նչ պատասխաններ ստացաք:

-Ֆրանսիան աշխարհի 5-րդ ամենամեծ երկիրն է: Այն ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի անդամ է եւ իրավիճակի վրա ազդելու բազմաթիվ եղանակներ ունի: Էական չէ, թե դա Անվտանգության խորհրդում դիվանագիտական մակարդակով է արվում, թե այլ երկրների շրջանում իրազեկվածության մակարդակը բարձրացնելու շնորհիվ: Նախագահ Մակրոնը հոկտեմբերի 12-ին միլիոնավոր ֆրանսիացիների առաջ հեռուստատեսությամբ հայտարարեց. «Մենք չենք լքի հայերին»: Երեկ նրան խնդրեցինք նախաձեռնություններ անել այս համերաշխությունը կոնկրետացնելու համար: Մենք հուսադրող պատասխաններ ստացանք: Խոսք չի կարող անգամ լինել այն մասին, որ Ադրբեջանին թույլ կտրվի անպատիժ սպառնալ եւ ճնշել հայերին: Մենք կարծում ենք, որ Ֆրանսիան կարող է նոր նախաձեռնություններ ստանձնել դիվանագիտական մակարդակում՝ Անվտանգության խորհրդի եւ Եվրամիության մակարդակով:

-Դուք հանդիպմանը ներկա եք եղել Մուրադ Փափազյանի հետ, ում մուտքը Հայաստան արգելված է: Դուք խոսե՞լ եք դրա մասին:

-Նախագահը նշեց Մուրադ Փափազյանի հետ կապված իրավիճակի մասին: Մինչ նախագահի հետ հանդիպումն արդեն Մուրադի հետ որոշել էի չքննարկել խնդիրը: Մենք չենք ցանկանում այս թեման դարձնել հիմնախնդիր Ֆրանսիայի եւ Հայաստանի հարաբերություններում եւ ոչ էլ Ֆրանսիայի իշխանություններին դնել արբիտրի կարգավիճակում, անգամ եթե Մուրադը Ֆրանսիայի քաղաքացի է, եւ այն, ինչ կատարվում է նրա հետ, ինքնաբերաբար վերաբերում է նաեւ Ֆրանսիային: Ես անկեղծորեն հույս ունեմ, որ Մուրադի՝ Հայաստան գալու այս արգելքը հնարավորինս շուտ կվերացվի: Այս անարդար որոշումը թուլացնում է մեզ հավաքականորեն, բայց մենք մտադիր չենք այս հարցում ներգրավել Ֆրանսիային: Մենք ավելի լուրջ եւ հրատապ գործեր ունենք, որոնցով զբաղվել է պետք: Էմանուել Մակրոնի հետ մեր հանդիպումը միայն մեկ նպատակ ուներ՝ խթանել Ֆրանսիայի աջակցությունը Հայաստանին եւ կոնկրետ օգնություն ստանալ շրջափակումը ճեղքելու համար: Սա էր ինձ եւ Մուրադի համար ամենակարեւորը:

-Ինչպե՞ս հնարավոր եղավ կազմակերպել հանդիպումը:

-Գիտեք, որ ֆրանսահայ կազմակերպությունների համակարգող խորհուրդը՝ CCAF-ը, գոյություն ունի ավելի քան 22 տարի: Մենք այս կազմակերպության մեջ համախմբել ենք Ֆրանսիայի գրեթե բոլոր հայկական միությունները, եւ մենք մեր տեղն ունենք Ֆրանսիայի քաղաքական դաշտում, մեզ հարգում են եւ հաշվի նստում: Եվ ես կարծում եմ, որ մեր գոյությունը թույլ է տվել Ֆրանսիային դառնալ Հայաստանի ամենամեծ աջակիցներից մեկը, ինչպես նաեւ հայկական հարցի հետ կապված հարցերում ամենանվիրված երկրներից մեկը: Ժակ Շիրակի՝նախագահ ընտրվելուց հետո մենք մշտական կապի մեջ ենք պետության բարձրագույն իշխանությունների հետ: Հայաստանը միշտ կարողացել է հույս դնել CCAF-ի վրա՝ իր ձայնը լսելի դարձնելու եւ Ֆրանսիայի Հանրապետությունում իր շահերը պաշտպանելու համար: Դա մեր լինելու հիմնական պատճառներից մեկն է: Մենք շարունակում ենք այս ուղղությամբ՝ այն համոզմամբ, որ միասնությունն ուժ է:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՃԵԼ Է

Նախորդ տարվա հունվար-նոյեմբեր ամիսներին Հայաստանում գրանցված հանցագործությունների ընդհանուր թիվը կազմել է 33 հազար 282 դեպք, իսկ 2021 թվականի նույն ժամանակահատվածում Հայաստանում գրանցված է եղել հանցագործությունների 27 հազար 56 դեպք. հանցագործությունների թիվը մեկ տարվա կտրվածքով ավելացել է 6226 դեպքով:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հիմնականում աճել են ոչ մեծ ծանրության հանցագործությունները: 2021 թվականի 11 ամիսներին Հայաստանում գրանցվել է ոչ մեծ ծանրության հանցագործությունների 14 հազար 603 դեպք, նախորդ տարվա այդ ցուցանիշը կազմել է 18 հազար 623: Միջին ծանրության, ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների թիվը եւս ավելացել է: Առանձնապես ծանր հանցագործությունների թիվը 2021-ի տասնմեկ ամիսներին եղել է 318, անցած տարվա նույն ժամանակահատվածում՝ 893: Հատկանշական է, որ, հանցագործությունների տեսակներով պայմանավորված, ավելացել են կաշառք ստանալու դեպքերը: 2021 թվականի տասնմեկ ամիսներին կաշառք ստանալու ընդամենը 196 դեպք է գրանցվել, իսկ անցյալ տարի այդ նույն բնույթի հանցագործությունների թիվը հասել է 200-ի:

Բացի այս, նշենք, որ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերի քանակը մեկ տարվա ընթացքում 44-ից դարձել է 84: Ի դեպ, հասարակական անվտանգության, հասարակական կարգի եւ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ են եղել, որոնց մասով անցյալ տարվա տասնմեկ ամիսներին դեպքերի նշանակալի աճ է արձանագրվել: 2021 թվականի հունվար-նոյեմբերին 5668 դեպքի դիմաց անցյալ տարի արձանագրվել է 10 հազար 418 հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործություններ: Նշենք նաեւ, որ հասարակական կարգի դեմ ուղղված հանցատեսակներից էլ աճը հիմնականում արձանագրվել է թմրանյութի հետ կապված հանցատեսակներում:

ՍՅՈՒՆԻՔ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 11-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՈՐՊՆՔ ԵՆ

ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Հայաստանում հանքարդյունաբերող ընկերությունը գլխավորում է խոշոր հարկատուների ցանկը: Խոսքը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի մասին է, որը պետական բյուջե նախորդ տարի վճարել է 143 մլրդ 933 մլն դրամ հարկ ու տուրք: Հազար խոշոր հարկատուների ցանկի երկրորդ տեղում է «Գազպրոմ Արմենիա» ընկերությունը՝ 52 մլրդ 275 մլն դրամ հարկային վճարումով: Հաջորդը ծխախոտ արտադրող «Գրանդ Տաբակո» ընկերությունն է: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս ընկերությունը պետական բյուջե վճարել է 45 մլրդ 36 մլն 635 հազար դրամ: Հազար խոշոր հարկատուների ցանկի չորրորդ տեղում դարձյալ ծխախոտ արտադրող ընկերություն է՝ «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ընկերությունը:

Խոշոր հարկատու է նաեւ Ագարակի պղնձա-մոլիբդենային ընկերությունը, որի կատարած հարկային վճարումները կազմել են 19 մլրդ 588 մլն 908 հազար դրամ: Ցանկի 6-րդ տեղում է ծխախոտ ներկրող ՝ «Ֆիլիպ Մորիս Արմենիա»-ն, որը վճարել է 18 մլրդ 142 մլն 724 հազար դրամ հարկ ու տուրք: Հազար խոշոր հարկատուների ցանկում հայտնվել է նաեւ հեռախոսներ ներմուծող եւ վաճառող «Մոբայլ Սենթր Արթ» ընկերությունը՝ 17 մլրդ 569 մլն 460 հազար դրամ հարկային վճարումներով: Խոշորների ցանկի 8-րդ տեղում դարձյալ ներմուծող ընկերություն է՝ «ջեյ թի Այ Արմենիա»-ն որը պետական բյուջե վճարել է 16 մլրդ 993 մլն դրամ հարկ: Բենզինի ներմուծմամբ եւ վաճառքով զբաղվող «Սի Փի Էս Էներջի» ընկերությունը կատարել է 16 մլրդ 987 մլն 68 հազար դրամ: Ցանկի տասներորդ տեղում «ՄՏՍ Հայաստան»-ն է: Այս ընկերությունը պետական բյուջե վճարել է 15 մլրդ 946 մլն 43 հազար դրամ հարկ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հրապարակած հազար խոշոր հարկատուների ցանկից պարզ երեւում է, թե տնտեսությունն ինչի վրա է հիմնված: Մեր հանրապետությունում այդպես էլ փոքր ու միջին ձեռնարկատիրությունը չի զարգանում: Ստացվում է, որ մշակող արդյունաբերությամբ զբաղվող ընկերություններ չկան, իսկ արդյունաբերությամբ զբաղվողները շատ քիչ տոկոս են կազմում: Հազար խոշոր հարկատուների տասնյակում, կարելի է ասել, քիչ թվով տնտեսվարողներ կան, որոնք տեղական արտադրությամբ են զբաղվում: Արձանագրենք, որ Հայաստանի տնտեսության վրա իրական ազդեցություն ունեն միայն խոշոր ընկերությունները, որոնք կամ բենզին են ներկրում, կամ ծխախոտ են արտադրում, ներկրում, կամ պղինձ են արդյունահանում:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽՈՒՄ ՓԱԿՎԵԼ ԵՆ 41 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

Արցախի կառավարության տեղեկագրում հրապարակվել է շրջափակման 45 օրվա վիճակագրությունը.

-11 երեխա գտնվում է մանկական հիվանդանոցի նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքներում,

-10 չափահաս բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որոնցից 3-ը՝ ծայրահեղ ծանր վիճակում,

-արդեն 164 երեխա է ծնվել շրջափակման մեջ,

-Արցախի առողջապահության նախարարության ենթակայության տակ գործող բոլոր բուժհաստատություններում պլանային վիրահատությունների դադարեցման պատճառով 500 քաղաքացի զրկվել է վիրահատվելու միջոցով առողջական խնդիրների լուծման հնարավորությունից,

-մինչ այսօր Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ Արցախից Հայաստան է տեղափոխվել 46 հիվանդ՝ համապատասխան բուժում ստանալու համար,

-ստեղծված տնտեսական բարդ իրավիճակի պատճառով նախնականորեն առնվազն 4700 մարդ կորցրել է աշխատանքը եւ եկամտի աղբյուրը:

-ավելի քան 17600 տոննա կենսական նշանակության ապրանքներ կմակատարարվեին Արցախ, եթե չլիներ շրջափակումը, որի ընթացքում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի եւ ՌԴ խաղաղապահ զորակազմի կողմից մատակարարվել է դրա միայն չնչին մասը,

-շրջափակման պայմաններում սննդի սրացող սղության պատճառով հունվարի 9-ից ամբողջությամբ կամ մասամբ փակվել են 41 մանկապարտեզ, 56 նախադպրոցական խումբ,

-6828 երեխա այլեւս չի կարողանում մանկապարտեզ, նախակրթարան եւ երկարօրյա դպրոց հաճախել՝ զրկվելով համապատասխան խնամք, սնունդ եւ կրթություն ստանալու հնարավորությունից,

-հունվարի 18-ից ջեռուցման ու էլեկտրամատակարարման խնդիրների պատճառով դադարեցվել է Արցախի բոլոր 118 դպրոցների աշխատանքը՝ ավելի քան 20000 երեխայի զրկելով կրթություն ստանալու իրավունքից:

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»

ГАЗПРОМ АРМЕНИЯ

2023 թվականի հունվար ամսվա 2-րդ տասնօրյակին մատակարարված բնական գազի ստորին այրման ջերմության միջին արժեքները՝ ըստ տարածքների:

Բնական գազի ստորին այրման ջերմությունը, կկալ/մ³

I Ա-1ա, I Ա-1բ, I Ա-2, I Ա-3ա-1ա, I Ա-3ա-1բ , I Ա-3ա-2, I Ա-3բ, I Բ-1, I Բ-2, I Բ-3, II Ա-1 տրծք	I Ա-4 տրծք	II Բ-1ա տրծք	II Բ-1բ, II Բ-1գ տրծք	II Ա-2, II Բ-2 տրծք
8263	8290	8156	8006	7990

Չափումները կատարվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման եւ չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից:

I Ա-1ա- տարածք

Տավուշի ԳԳՄ
Բենտոնիտի ԳԲԿ (Իջեւան)
Բաղանիսի ԳԲԿ
Նոյեմբերյանի ԳԲԿ
Դիլիջանի ԳԲԿ

Սեւանի ԳԳՄ
Սեւանի ԳԲԿ
Ծովագյուղի ԳԲԿ

Լոռու ԳԳՄ
Ֆիոլետովոյի ԳԲԿ

I Ա-1բ տարածք

Սեւանի ԳԳՄ
Այգուտի ԳԲԿ

I Ա-2 տարածք

Լոռու ԳԳՄ
Ալավերդու ԳԲԿ
Թումանյանի ԳԲԿ
Ախթալայի ԳԲԿ
Ստեփանավանի ԳԲԿ (Գար-գար)
Վանաձորի ԳԲԿ-1
Վանաձորի ԳԲԿ-2 (Տարոն)
Մեղրուտի ԳԲԿ
Մարգահովիտի ԳԲԿ
Լերմոնտովոյի ԳԲԿ
Լեռնապատի ԳԲԿ
Սպիտակի ԳԲԿ
Մեծ Պառնու ԳԲԿ
Շիրակամուտի ԳԲԿ
Սարահարթի ԳԲԿ
Լուսաղբյուրի ԳԲԿ
Կուրթանի ԳԲԿ

Շիրակի ԳԳՄ
Գյումրու ԳԲԿ
Գյումրու ԳԲԿ (Ամասիայի գիծ)
Արեւիկի ԳԲԿ
Արթիկի ԳԲԿ
Մարալիկի ԳԲԿ
Լանջիկի ԳԲԿ
Ջարինջայի ԳԲԿ

Արագածոտնի ԳԳՄ
Թալինի ԳԲԿ

Արմավիրի ԳԳՄ
Քարակերտի ԳԲԿ

I Ա-3ա-1ա տարածք

Կոտայքի ԳԳՄ
Հրազդանի ԳԲԿ
Չարենցավանի ԳԲԿ

I Ա-3ա-1բ տարածք

Սեւանի ԳԳՄ
Գագարինի ԳԲԿ

I Ա-3ա-2 տարածք

Աբովյանի ԳԳՄ
Արզնու ԳԲԿ
Ջորավանի ԳԲԿ

Արագածոտնի ԳԳՄ
Աշտարակի ԳԲԿ

I Ա-3բ տարածք

Երեւանի ԳԳՄ
Ջրվեժի ԳԲԿ

Աբովյանի ԳԳՄ
Ակունքի ԳԲԿ
Ջրվեժի ԳԲԿ (Գառնիի գիծ)
Ողջաբերդի ԳԲԿ

«Հրազդան 5» հիմնարկ

I Ա-4 տարածք

Երեւանի ԳԳՄ
Երեւանի ԳԲԿ-1
Աբովյանի ԳԳՄ
Երեւանի ԳԲԿ-1 (Աբովյանի գիծ)

I Բ-1 տարածք

Երեւանի ԳԳՄ
Երեւանի ԳԲԿ-2

I Բ-2 տարածք
Երեւանի ԳԳՄ
Երեւանի ԳԲԿ-4

Արտաշատի ԳԳՄ
Նոր Խարբերդի ԳԲԿ
Մասիսի ԳԲԿ
Հայանիստի ԳԲԿ

I Բ-3 տարածք

Արմավիրի ԳԳՄ
Էջմիածնի ԳԲԿ
Մեծամորի ԳԲԿ
Արմավիրի ԳԲԿ

II Ա-1 տարածք

Գավառի ԳԳՄ
Գավառի ԳԲԿ
Սարուխանի ԳԲԿ
Ծովազարդի ԳԲԿ
Այրիվանի ԳԲԿ

Մարտունու ԳԳՄ
Մարտունու ԳԲԿ
Երանոսի ԳԲԿ
Վարդենիսի ԳԲԿ

II Ա-2 տարածք

Վայոց Ձորի ԳԳՄ
Եղեգնաձորի ԳԲԿ
Մալիշկայի ԳԲԿ
Վայքի ԳԲԿ
Ջերմուկի ԳԲԿ
Հեր-Հերի ԳԲԿ
Աղավնաձորի ԳԲԿ

II Բ-1ա տարածք

Արտաշատի ԳԳՄ
Գետազատի ԳԲԿ
Նարեկի ԳԲԿ

II Բ-1բ տարածք

Արտաշատի ԳԳՄ
Արտաշատի ԳԲԿ

Արարատի ԳԳՄ
Փ.Վեդու ԳԲԿ
Արարատի ԳԳՄ
Վեդու ԳԲԿ

II Բ-1գ տարածք

Արարատի ԳԳՄ
Արարատի ԳԲԿ

II Բ-2 տարածք

Սյունիքի ԳԳՄ
Կապանի ԳԲԿ
Համլետավանի ԳԲԿ
Քաջարանի ԳԲԿ
Ջագեձորի ԳԲԿ
Գորիսի ԳԲԿ
Խնձորեսկի ԳԲԿ
Տեղի ԳԲԿ
Սիսիանի ԳԲԿ
Շաղաթի ԳԲԿ
Սառնակունքի ԳԲԿ
Նորավանի ԳԲԿ
Հարթաշենի ԳԲԿ
Ագարակի ԳԲԿ
«Արցախգազ» ՓԲԸ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲՈՎԿ ՆԱԽԱԳԱՀ

ԿԱՐԵՆ ՔԵՌՅԱՆԸ՝ ԱԶԱՏՄԱՆ ՊԱՏՃԱՌԻ ՄԱՍԻՆ

Ինչպես երեկ ArmLur.am-ը հայտնեց, Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահ Կարեն Քեռյանը հրաժարական է ներկայացրել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Կարեն Քեռյանը մինչ ազատման դիմում գրելը շաս լուրջ խոսակցություն է ունեցել նախարարության վերնախավի հետ, ինչից հետո հրաժարականի դիմումում շաս վրդովված գրել է, որ իր համար ընդունելի չէ նախարար Ժաննա Անդրեասյանի նոր գործելաոճը:

ArmLur.am-ը կապ հաստատեց Կարեն Քեռյանի հետ, որը մեզ հետ զրույցում ասաց, որ մանրամասն պատճառների մասին ավելի ուշ կխոսի, սակայն ընդգծեց, որ այն քաղաքականությունը, որ վարում է այս պահին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդերասյանը, նրա համար անընդունելի է:

Հարցին, թե խնդիրը կոնկրետ Ժաննա Անդրեասյանի հետ է կապված, թե ոչ, մեր զրուցակիցն ասաց. «Խնդիրը անձերով պայմանավորված չէ, խնդիրը նրանում է, թե ինչ գործողություններ են տեղի ունենում ու ինչ միջավայրում են տեղի ունենում, չնայած որ, ի վերջո, գալիս է անձերի, բայց ով էլ որ լիներ այդ իրավիճակում, միեւնույնն է, եթե նույն բանը արված լիներ իմ հանդեպ, ես նույնն էի անելու»:

Քեռյանի խոսքով՝ նախարարությունը որոշում է կայացրել, Բարձրագույն որակավորման կոմիտեն եւ Կրթության կոմիտեն միացնելով, ստեղծել նոր կառույց, որը կկոչվի Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե, եւ սա է եղել այն հիմնական պատճառը, որի համար նա ազատման դիմում է գրել:

«Այսինքն՝ առանց իմ իմացության քննարկվել եւ մշակվել է նախագիծ այն դեպքում, երբ կառույցներից մեկի ղեկավարն ընդհանրապես տեղյակ չէ՝ դա ինձ համար անընդունելի է»,- վրդովված հայտնեց նա:

Նշենք, որ ArmLur.am-ի տեղեկություններով՝ այս միացմամբ նախարարությունը փորձում է այնպես անել, որ այլեւս փոխնախարարի անհրաժեշտություն չլինի: Ժաննա Անդրեասյանի՝ նախարար նշանակվելուց հետո փոխնախարարի այդ հաստիքը դեռ թափուր է, այսինքն՝ այս միացմամբ պետք է այնպես լինի, որ այլեւս փոխնախարար այդ գծով չնշանակեն:

Նշենք, որ Կրթության կոմիտեի նախագահն այժմ Սարգիս Հայոցյանն է:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ

Երգչուհի Նարե Գեւորգյանն իր ինստագրամյան էջում նոր հրապարակում է արել՝ հայտնելով համերգային շրջագայության մասին:

Երգչուհու հրապարակած կադրերը «Զվարթնոց» օդանավակայանից են: Նա կրում է կանաչ երանգի տաբատ եւ անձրեւանոց, սպիտակ հուդի եւ սեւ ձմեռային կոշիկներ:

«Տալիս ենք մեկնարկն իմ՝ այս տարվա առաջին համերգային շրջագայության», - հրապարակմանը կից գրել է երգչուհին՝ հետեւորդներին հարցնելով՝ արդյոք կարող են գուշակել, թե որտեղ է մեկնում:

«Կամերային թատրոն, նոր ներկայացում: Շուտով»,- հրապարակումը կարճ մակագրել է դերասանուհին:

Ավելի վաղ Անի Լուպեն երեկոյան կերպարում լուսանկար էր հրապարակել: Կադրում դերասանուհին կրում էր կարճ սեւ զգեստ եւ գինեգույն երկարաճիտ կոշիկներ, վարսերն արձակված էին, դիմահարդարումը՝ վառ: «Հենց այնպես»,- հրապարակմանը կից գրել էր դերասանուհին:

ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Դերասանուհի Անի Լուպեն «Ինստագրամ» սոցիալական հարթակի իր էջում հրապարակում է արել՝ հայտնելու Երեւանի կամերային թատրոնում սպասվող նոր ներկայացման մասին:

Հրապարակված տեսանյութում դերասանուհին եւ դերասան Սենիկ Բարսեղյանը պարային հատված են փորձում:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ՝ 0:4 ՀԱՇՎՈՎ

Իտալիայի չեմպիոն «Միլանի» տեխնիկական տնօրեն Պաոլո Մալդինին մեկնաբանել է Հռոմի «Լացիոյից» կրած 0:4 հաշվով պարտությունը Իտալիայի առաջնության 19-րդ տուրի արտագնա խաղում:

«Անցած մրցաշրջանում մենք գիտեինք, որ պայքարում ենք չեմպիոնի տիտղոսի համար հաղթանակից շատ ավելի վաղ: Ակնհայտ է, որ հիմա իրավիճակն այլ է: Մենք դուրս մնացինք Իտալիայի գավաթի խաղարկությունից, պարտվեցինք Սուպերգավաթի խաղում: Երկու նպատակը բաց թողեցինք: «Միլանը» վերջին երեք խաղում 11 գոլ է բաց թողել: Ակնհայտ է, որ հիմա բարդ պահ է:

Անցած մրցաշրջանում մենք հաղթեցինք թիմային ոգու շնորհիվ: Հիմա մեզ պետք է նույնը: Իհարկե, սա լիակատար աղետ չէ, քանի որ մենք երկրորդ տեղում ենք: Անցած մրցաշրջանում մենք 7 տարի անց դարձյալ դուրս եկանք Չեմպիոնների լիգա եւ մեկ տասնամյակ անց դարձյալ նվաճեցինք երկրի չեմպիոնի գավաթը: Մեր այս դիրքը դեռ համապատասխանում է մեր հավակնություններին»,- Մալդինիի խոսքը մեջբերում է Football Italia-ն:

«Միլանը» 38 միավորով երկրորդ տեղում է եւ առաջատար «Նապոլիից» հետ է 12 միավորով: «Լացիոն» երրորդն է՝ 37 միավոր:

«ՄԵԾ ՍԱՂԱՎԱՐՏԻ» ՄՐՑԱՇԱՐ

«Մեծ սաղավարտի» մրցաշարերի 21-ակի հաղթող, աշխարհի 5-րդ ռակետ Նովակ Ջոկովիչը դուրս եկավ Ավստրալիայի բաց առաջնության կիսաեզրափակիչ:

Սերբ թենիսիստը մրցեց աշխարհի 6-րդ ռակետ, ռուսաստանցի Անդրեյ Ռուբլյովի հետ եւ առավելության հասավ երեք սեթում՝ 6:1, 6:2, 6:4:

Կիսաեզրափակիչում Նովակ Ջոկովիչի մրցակիցը կլինի աշխարհի 35-րդ ռակետ, ամերիկացի Թոմի Փոլը, որը քառորդ եզրափակիչում 7:6 (8:6), 6:3, 5:7, 6:4 հաշվով պարտության է մատնել աշխարհի 89-րդ ռակետ ամերիկացի Բեն Շելթոնին:

Կիսաեզրափակիչի առաջին զույգը կազմել էին աշխարհի 20-րդ ռակետ, ռուսաստանցի Կարեն Խաչանովը եւ աշխարհի չորրորդ ռակետ, հույն Ստեֆանոս Ցիցիպասը:

Կիսաեզրափակիչի հանդիպումները տեղի կունենան հունվարի 27-ին:

Ավստրալիայի բաց առաջնության մրցանակային հիմնադրամը 51,3 միլիոն դոլար է:

● Հունվարի 27-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Գնա մեռի, արի սիրեմ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ անեմ եւ ու՞մ դիմեմ, եթե ինձ ստիպում են բացահայտել քվեարկությունս կամ քվեարկել կոնկրետ թեկնածուի օգտին:

Հայկ Բաբաջանյան (25 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Սահմանադրությամբ եւ օրենքով երաշխավորվում է քվեարկության գաղտնիությունը: Ընտրական իրավունքն իրականացվում է ազատության եւ կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որեւէ թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ նրանց դեմ:

Եթե որեւէ եղանակով Ձեզ հարկադրում են քվեարկել որոշակի թեկնածուի կամ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի օգտին, ապա հանցագործության մասին կարող եք ահազանգել ոստիկանության թեժ գծի հեռախոսահամարով՝ զանգահարելով 1-02, եւ հայտնել հանցագործության դեպքի մասին: Հանցագործության մասին կարող եք հայտնել նաեւ անձամբ՝ ներկայանալով ոստիկանության տարածքային բաժին, եւ այնտեղ հերթապահող հետաքննիչին հայտնել կատարված կամ նախապատրաստվող հանցագործության մասին: Զանգահարելու դեպքում ոստիկանությունում գրանցվում է ահազանգ դեպքի մասին, որից հետո հերթապահող ոստիկանության աշխատակիցները անհապաղ ներկայանում են դեպքի վայր՝ տեղում պարզելու դեպքի հանգամանքները: Դրանից հետո Ձեզ կհրավիրեն ոստիկանություն Ձեզնից հաղորդում ընդունելու նպատակով: Երկու դեպքում էլ կազմվում է հանցագործության վերաբերյալ հաղորդման թերթիկ, որից հետո Ձեզ կտրամադրեն հաղորդում ներկայացրած լինելը հավաստող արձանագրության մեկ օրինակ:

ՀՀ ոստիկանություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե հանցագործությունը տեղի է ունեցել քվեարկության օրը տեղամասային կենտրոնում, ապա անհրաժեշտ է այդ մասին տեղյակ պահել հանձնաժողովի նախագահին՝ խնդրելով հրավիրել այդ ընտրական տեղամասում ծառայություն իրականացնող ոստիկանին: Ոստիկանին անհրաժեշտ է ներկայացնել հանցագործության մասին հաղորդում՝ նշելով հանցագործություն համարվող դեպքի մասին եւ բնութագրելով հնարավոր հանցագործություն կատարած անձին: Հաղորդումը կարող է լինել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Հաղորդման մասին կազմվում է արձանագրություն, որը պետք է ստորագրվի Ձեր եւ հաղորդումը վերցնող ոստիկանի կողմից:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Կորոնավիրուսով ինքնամեկուսացած եմ տանը եւ չեմ կարողանում դուրս գալ՝ սնունդ գնելու: Ի՞նչ անեմ եւ ու՞մ դիմեմ:

Ալիսա Սարգսյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանում արտակարգ դրության հայտարարումից հետո տարբեր պետական մարմիններ եւ հասարակական կազմակերպություններ իրենց աջակցությունն են ցուցաբերում այն քաղաքացիներին, որոնք կորոնավիրուսով վարակված լինելու պայմաններում ինքնամեկուսացել են եւ չեն կարողանում իրենց համար սնունդ կամ դեղորայք գնել:

Անհրաժեշտ է կապ հաստատել այդ մարմինների հետ, հայտնել Ձեր տվյալները, այն առաջին անհրաժեշտության ապրանքների մասին, որոնց կարիքն ունեք:

ՀՀ առողջապահության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Առաջնահերթ այդ խնդրանքով կարող եք դիմել տարածքային սոցիալական ապահովության ստորաբաժանում: Կարող եք նաեւ այդ հարցերով Երեւան քաղաքում դիմել վարչական շրջաններ, իսկ մարզերի, այլ քաղաքների կամ գյուղական համայնքների դեպքում՝ դիմել համապատասխան համայնքի աշխատակազմերին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւան-Մեղրի ավտոճանապարհին

Հունվարի 25-ին ավտովթար է տեղի ունեցել Սյունիքի մարզում: Ժամը 00:30-ի սահմաններում Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի 30-ամյա Համիդ Մ.-ն իր վարած Mercedes GL450 մակնիշի ավտոմեքենայով Երեւան-Մեղրի Մ2 ավտոճանապարհի 337 կմ հատվածում, ըստ նախնական տեղեկությունների, կորցրել է ավտոմեքենայի ինքնակառավարումը, դուրս եկել երթեւեկելի գոտուց դեպի ձախ եւ բախվել բլրին: Վթարի հետեւանքով Համիդ Մ,-ն, նրա ուղեւոր՝ Վրաստանի Հանրապետության քաղաքացի 33-ամյա Ագակի Ռ.-ն մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Քաջարան» բժշկական կենտրոն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.01.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: